ԿՐԹԱԿԱՆ

# ՄԻԽԵԻԼ ՉԽԵՆԿԵԼԻ. «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ»

*Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Չխենկելին, միասնական ազգային քննությունների ամսաթվի եւ ծեւաչափի փոփոխություն չի նախատեսվում:*



Նախարարի խոսքով, հունիսին կհայտարարվի քննությունների ստույգ ամսաթիվը:

- Այս պահին կողմնորոշված ենք հուլիս ամսի վրա, ինչպես դա նախորդ տարիներին էր, միակ փոփոխությունը, որը հնարավոր է տեղի ունենա, դա քննությունների օգոստոս ամսին տեղափոխումն է, եւ դա տեղի կունենա միայն այն դեպքում, եթե դա կպահանջի կոնկրետ համավարակային իրավիճակը: Մանրամասների մասին կկայանա հատուկ ճեպազրույց, որը տեղի կունենա հուլիսին, եւ կհայտարարվի քննությունների հստակ ամսաթիվը,- հայտարարեց Միխեիլ Չխենկելին:

# ՍԿՍՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՆՑՈՒՄԸ




*Հունիսի 2-ից Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը սկսեց առաջին դասարանցիների գրանցման երրորդ փուլը: Գործընթացը կտեւի մինչեւ հունիսի 25-ը:*

Երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա գրանցումն իրականացվելու է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում` registration.emis.ge (տես` համընդհանուր գրանցման հրահանգները` Mes.gov.ge):

Ըստ կրթության նախարարության` էլեկտրոնային գրանցում անցած աշակերտի փաստաթղթերի ներկայացնելը կշարունակվի հունիսի 2-ից մինչեւ հուլիսի 5-ը: Սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում` գրանցումը ավտոմատ կերպով կդադարեցվի:

Գրանցման վերջին` չորրորդ փուլը կսկսվի օգոստոսի 20-ին եւ կտեւի մինչեւ սեպտեմբերի 10-ը: Գրանցում կարող են անցնել այն աշակերտները, որոնք չեն կարողացել գրանցվել առաջին, երկրորդ եւ երրորդ փուլերում, կամ` ցանկանում են փոխել իրենց գրանցումը: Աշակերտների գրանցումն այս փուլում ապահովվելու է հանրային դպրոցը` երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից տրամադրված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

Ըստ կրթության նախարարության` փաստաթղթերի ներկայացնելը կսկսվի օգոստոսի 20-ից եւ կշարունակվի մինչեւ սեպտեմբերի 10-ը:

Վրաստանի հանրակրթական ուսումնական հաստատություններում, աշակերտի առաջին դասարան գրանցվելու համար, անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը` աշակերտի օրինական ներկայացուցչի դիմումը, որը պետք է ընդգրկի տեղեկություններ օրինական ներկայացուցչի բնակության վայրի եւ հեռախոսի համարի վերաբերյալ, ինչպես նաեւ` պետք է համապատասխանի Վրաստանի վարչական օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին, օրինական ներկայացուցչի անձը հաստատող վկայականի պատճեն եւ Վրաստանում բնակության իրավունք ունենալու փաստաթղթի պատճեն (առկայության դեպքում): Փաստաթղթերը օտար լեզվով ներկայացնելու դեպքում` դրանք պետք է ունենան վրացերեն թարգմանություն `Վրաստանի օրենսդրությամբ սահմանված նորմերի համաձայն` թարգմանություն վրաց լեզվով, աշակերտի ծննդյան վկայականի կամ ինքնության փաստաթղթի պատճեն եւ Վրաստանում բնակության թույլտվության փաստաթղթի պատճեն (առկայության դեպքում): Փաստաթղթերը օտար լեզվով ներկայացնելու դեպքում` դրանք պետք է ուղեկցվեն վրացերեն թարգմանությամբ` Վրաստանի օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:

# ԱՌՑԱՆՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ` ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ

*Հունիսի 4-ից Վրաստանի առաջին ալիքով սկսվեց հայկական եւ ադրբեջանական դպրոցների աշակերտների համար առցանց օլիմպիադա:*




Օլիմպիադային կարող են մասնակցել ոչ վրացալեզու դպրոցների յոթերորդ դասարանի աշակերտները: Մոտ 200 մասնակից արդեն հայտնել է մասնակցության ցանկություն, որից ընտրվել է մի քանի հայտ: Ծրագրի նպատակը վրացերենի ժողովրդականացումն է այն տարածաշրջաններում, որտեղ բնակվում են ազգային փոքրամասնությունները:

«Մեր վրաց լեզուն» Վրաստանի առաջին ալիքի նախագիծն է, որի նպատակն է ժողովրդականացնել վրաց լեզուն: Նախագծի շրջանակներում` նախատեսվում են մի շարք ակտիվություններ: Նախագծի մասերից մեկը լինելու է ոչ վրացալեզու դպրոցների աշակերտների համար առցանց օլիմպիադան: Այս տարի նախագիծը իրականացվում է Վրաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության աջակցությամբ: Այս տարի օլիմպիադային կարող են մասնակցել ոչ վրացալեզու դպրոցների յոթերորդ դասարանի աշակերտները: Նախագծի մասնակիցներին կփոխանցվեն հատուկ հավաստագրեր: Իսկ երեք հաղթողներին կփոխանցվեն նվերներ: Կպարգեւատրվեն նաեւ հաղթող աշակերտների վրաց լեզվի եւ գրականության ուսուցիչները:

Նախագծի ֆեյսբուք էջում` «Մեր վրաց լեզուն», պարբերաբար կանցկացվեն վիկտորինաներ: Հարցին ճիշտ պատասխանելու դեպքում` ոչ վրացալեզու դպրոցների աշակերտները կշահեն խրախուսական նվերներ:

- Ոչ վրացալեզու բնակչության թվում վրաց լեզվի չիմացությունը կարեւորագույն մարտահրավեր է, որն այսօր ծառացած է մեր երկրի առջեւ, մենք փորձում ենք գտնել ուղիներ եւ ցանկանում ենք, որպեսզի այս խնդիրը տեսնեն նաեւ այլք,- այս մասին հայտարարել է Վրաստանի առաջին ալիքի տնօրեն Վասիլ Մաղլափերիձեն:

- Սա անչափ կարեւոր նախագիծ է, շատ ավելի կարեւոր, քան կարող է առաջին հայացքից թվալ: Մի կողմից, սա վրաց լեզվի ուսուցման խրախուսում է, մյուս կողմից` որոշակի ուսումնասիրություն, թե ինչպես է վրաց լեզվի իմացության եւ ուսուցանման հարցը բարձրացված ոչ վրացալեզու բնակչության թվում,- նշել է Վասիլ Մաղլափերիձեն:

Միեւնույն ժամանակ, արդեն մի քանի շաբաթ է, ինչ Վրաստանի առաջին ալիք - կրթություն ալիքի եթերում, «հեռուստադպրոց» նախագծի շրջանակներում, ընթանում են վրաց լեզվի դասընթացներ` ադրբեջանալեզու եւ հայալեզու դպրոցների աշակերտների համար:

*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

ՀԻՇԱՏԱԿ

# ԷԼԳՈՒՋԱ ԿՈՊԱՁԵ



90 տարեկան հասակում վախճանվեց Վրաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, Պատվո շքանշանակիր, Ախալցիխեի պատվավոր քաղաքացի Էլգուջա Կոպաձեն:

Թբիլիսիի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետն ավարտելուց հետո, նա երկար տարիներ աշխատել է Ախալցիխեի շրջանի հանրակրթական եւ մասնագիտական դպրոցներում, եղել է Ախալցիխեի հացակոմբինատի տնօրեն, շրջգործկոմի մշակույթի, կրթության, պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժինների վարիչ, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում «Սաքարթվելոս Ռեսպուբլիկա» թերթի սեփական թղթակից:

Էլգուջա Կոպաձեի անվան հետ են կապված Ախալցիխեի շրջանի մշակութային-հանրակրթական ոլորտի նշանակալի նորամուծությունները: Նրա ջանքերով շրջանի գրեթե բոլոր գյուղերի գրադարանները համալրվեցին նոր գրքերով, Ախալցիխեում սկսեց գործել երաժշտական ուսումնարան: Էլգուջա Կոպաձեն առանձնակի հոգում էր նաեւ Ախալցիխեի շրջանում գործող հայկական դպրոցների եւ հայաբնակ գյուղերի մշակութային տների հարցով: Էլգուջա Կոպաձեի նախաձեռնությամբ` 1973 թվականին Ախալցիխեի գավառագիտական թանգարանը սկսեց գործել քաղաքի Ռաբաթ թաղամասում եւ պատահական չէր, որ 2015 թվականին Էլգուջա Կոպաձեն արժանացավ Ախալցիխե քաղաքի պատվավոր քաղաքացու կոչման:

Էլգուջա Կոպաձեն ամուսնացած էր, ուներ երկու զավակ: Նրա որդին` Գիորգի Կոպաձեն այսօր Ախալցիխեի մունիցիպալիտետից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորն է:

*ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ*

Սամցխե-Ջավախեթիի երկրամասային վարչությունը, Ախալցիխեի, Ախալքալաքիի, Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետարաններն ու սակրեբուլոն, «Վրաստան» թերթի խմբագրությունը իրենց վշտակցությունն են հայտնում Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Գիորգի Կոպաձեին, հոր` Ախալցիխեի պատվավոր քաղաքացի

***Էլգուջա ԿՈՊԱՁԵԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

# ՍՅՈՄԱ (ՍԱՄՎԵԼ) ԳԱՍՊԱՐՈՎԸ` ՈՐՊԵՍ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ



*Մայիսի 26-ին, 82 տարեկան հասակում, կորոնավիրուսից վախճանվեց ծնունդով թբիլիսցի, Ռուսաստանում եւ միջազգային կինոյի աշխարհում հայտնի կինոռեժիսոր Սյոմա (Սամվել) Գասպարովը:*

*Ռեժիսորի տիկինը` հանրաճանաչ դերասանուհի Նատալյա Վավիլովան, ով նկարահանվել էր Ալեքսանդրայի դերում` «Մոսկվան արցունքներին չի հավատում» հայտնի ֆիլմում, նույնպես վարակվել է կորոնավիրուսով, սակայն նրա առողջական վիճակի մասին տեղեկատվություն չկա:*

Սյոմա (Սամվել) Գասպարովը ծնվել է 1938 թվականի հունիսի 7-ին: Նա ծնվել եւ ապրել է Թբիլիսիի Ռուսթավելու պողոտայից դեպի Կոլտնտեսության հրապարակ տանող Փուրցելաձե փողոցի թիվ 14 համարում գտնվող հայրական տանը, Ռուսթավելու կինոթատրոնի հարեւանությամբ: Նրա հետ ապրում էին ծնողները, քանի դեռ նրանք ողջ էին, եւ իհարկե եղբայրը` Էդուարդն ու կտրսեր քույրը` Ալլան: Ի դեպ, այս տանն է մեծացել, Սյոմա եւ Էդուարդ Գասպարովների հետ ընկերական սերտ հարաբերություններ ունեցած նրանց հասակակից, նորանկախ Հայաստանի ԱԳ նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանը:

Մինչեւ կինոյի ոլորտում աշխատելը, նա հեռավար վարորդ էր եւ գրում էր պատմվածքներ: 1970 թվականին ավարտելով Մոսկվայի կինոյի պետական ինստիտուտը` նա ուսանել է անվանի կինոռեժիսոր, հիանալի կինոնկարների հեղինակ, ինչպիսիք են «Վեցերորդը», «Մոռացիր «մահ» բառը», «Հաց, ոսկի, նագան», «Առանց հատուկ ռիսկի» ֆիլմերի հեղինակ Միխեիլ Ռոմին, իսկ 1974 թվականից սկսել է նկարահանել ֆիլմեր: Նրա նկարահանած ֆիլմերից են «Ատելությունը», «Հաց, ոսկի, նագան», «Մահվան կոորդինատները», «Թակարդ մարդասպանի համար» եւ այլն: 1993 թվականին Մոսկվայի «Լուժնիկներում» նա կազմակերպել էր Մայքլ Ջեկսոնի համերգը:

...Մինչեւ Մոսկվա տեղափոխվելը, որ դառնար հերոսական դրվագներով ներթափանցված ֆիլմերի հեղինակ, Սամվելը, Վախթանգ (Բուբա) Կիկաբիձեի, մյուս ընկերների հետ, շատ հաճախ թբիլիսցիներին զարմացնում ու զայրացնում էր բաց ամերիկյան «Վիլիսով» իր «քյալագյոզությամբ»:

Սյոմա Գասպարովին, որը միշտ հաղթողի դերում էր, սակայն անիծյալ կորոնավիրուսին նա հաղթել չկարողացավ: Բարի հիշատակ նրան:

*ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ*

«Վրաստան» թերթի խմբագրությունը վշտակցում է Վրաստանում Մոսկվայի «Ինտերֆակս» գործակալության սեփական թղթակից Էդուարդ Գասպարովին, եղբոր`

***Սամվել (Սյոմա) ԳԱՍՊԱՐՈՎԻ***

մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՑԿԱՑՎԵԾ BRITACOM-Ի ՕՆԼԱՅՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ



*Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան, աշխարհի տարբեր հարկային վարչությունների ղեկավարների, ինչպես նաեւ միջազգային հարկային կազմակերպության եւ ակադեմիական շրջանի ներկայացուցիչների հետ, մասնակցեց BRITACOM-ի տեսախորհրդաժողովին, որը նվիրված էր «COVID-19»-ով պայմանավորված գլոբալ փոփոխություններին եւ դրանից բխող հարկային ոլորտում ծագած մարտահրավերներին:*

Հանդիպման 179 մասնակիցները քննարկեցին «COVID-19»-ի պայմաններում հարկային վարչարարության օրակարգում ծագած մարտահրավերների, հարկատուների աջակցության նպատակով ընդունված արտոնությունների եւ ակտիվ համագործակցության հարցերը:

Հանդիպման շրջանակներում, Լեւան Կակավան հարկային վարչությունների ներկայացուցչիչներին ներկայացրեց, ճգնաժամի հաղթահարման եւ հարկային բեռի թեթեւացման նպատակով, Վրաստանի կառավարության կողմից իրականացված փոփոխությունները, ինչպես նաեւ՝ գերատեսչության գործունեության մանրամասները:

- Վրաստանի կառավարության կողմից, հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում, մշակվեց նպատակային սոցիալական օգնության փաթեթ: Աշխատատեղերի պահպանման նպատակով՝ իրականացվեց եկամտահարկի վճարման սուբսիդավորում: Միաժամանակ, բոլոր հարկատուների համար, ովքեր տուժեցին համավարակի արդյունքում, եկամտահարկի եւ գույքահարկի վճարումները հետաձգվեցին, գործարկվեց ՀԱՀ-ի ավտոմատ վերադարձման է'լ ավելի դյուրացված եւ արագ մեխանիզմը, ինչը նշանակալի որոշում էր՝ գործարարության խրախուսման նպատակով,- հայտարարեց եկամուտների ծառայության պետը:

Լեւան Կակավան իր խոսքում շնորհակալություն հայտնեց միջազգային գործընկերներին ցուցաբերած աջակցության համար:

- Ցանկանում եմ նշել եւ շնորհակալություն հայտնել մեր միջազգային գործընկերներին, ովքեր հնարավորինս օգնեցին ճգնաժամի հաղթահարման ու համավարակի բացասական ազդեցության վերացման հարցում,- հայտարարեց Լեւան Կակավան:

Հիշեցնենք, որ BRITACOM-ը իրենից ներկայացնում է «Գոտու եւ ճանապարհի նախաձեռնության» անդամ երկրների շուրջ 100 հարկային վարչարարությունների միավորում, իսկ խորհրդարանական խորհրդում միավորված են առաջատար միջազգային հարկային կազմակերպությունների ղեկավար անձինք ու փորձագետներ:

Տեսախորհրդաժողովին ներկա էին նաեւ եկամուտների ծառայության միջազգային հարաբերությունների դեպարտամենտի պետ Սամսոն Ուրիդիան եւ նույն դեպարտամենտի մյուս ներկայացուցիչները:

## ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 1000 ՄԱՔՍԱՅԻՆԻ ՄՈՏ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ ՉԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

*Նոր կորոնավիրուսի ռիսկային խմբերի նպատակային թեստավորման շրջանակներում՝ հետազոտվել է 1000 մաքսավոր, եւ այս պահի դրությամբ նրանցից ոչ մեկի մոտ կորոնավիրուս չի ախտորոշվել:*



Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության տեղեկատվության համաձայն, թեստավորում է անցել «Սադախլո», «Լագոդեխի», «Գուգութի», «Գարդաբանի երկաթուղի», «Ղազբեգի», «Սարփի», «Բաթումիի նավահանգիստ», «Փոթիի նավահանգիստ», «Վալե», «Կարծախի», «Նինոծմինդա», «Մտկվարի», «Գարդաբանի» սահմանային անցակետերի շուրջ 1000 մաքսային: «Լուգարի» լաբորատորիա ուղարկված նմուշների պատասխանները բացասական են:

«Բացի այդ, եկամուտների ծառայությունը տեղեկացնում է, որ մայիսի 31-ին հաստատված դեպքը Մաքրման ընկերության աշխատակիցն է եւ աշխատում էր «Սադախլո ավտոճանապարհի» հարակից տարածքում: Մաքսայինները, քաղաքացիները եւ այլ ծառայությունների ներկայացուցիչները նշված կնոջ հետ շփում չեն ունեցել:

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի հետ համակարգմամբ, կորոնավիրուսի լիարժեք թեստավորման գործընթացն իրականացվում է նաեւ Եկամուտների ծառայության այլ մաքսակետերում»,- նշված է եկմուտների ծառայության հաղորդագրությունում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## TBCCREDIT.GE-ՈՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԸ ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ՕՆԼԱՅՆ ԿԱՐԳՈՎ

*TBCcredit.ge-ով արդեն հնարավոր է հեռավար, մի քանի րոպեի ընթացքում, ստանալ սպառողական վարկ: TBCcredit.ge-ը TBC բանկի թվային հարթակն է, որտեղ սպառողական վարկը կարելի է ստանալ առանց տանից դուրս գալու, մասնաճյուղերին վերապահված պայմաններով:*




Օնլայն վարկից օգտվելու համար՝ սպառողը WWW.TBCcredit.ge կայքում տեղակայելու է պարզ դիմումը եւ մի քանի րոպեում հաստատված լիմիտի վերաբերյալ կստանա պատասխանը: Վարկի ստացման համար սպառողը լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման կարիք չունի:

Օնլայն վարկի առավելագույն գումարը կազմում է 50 հազար լարի, նվազագույնը՝ 100 լարի: Ելնելով վարկային վարկանիշից եւ եկամուտներից՝ բացառված չէ սպառողի համար գումարի ավելացման հավանականությունը:

Ի տարբերություն սովորական օնլայն վարկերի, TBC-ի վարկը հաստատվում է անհատական տոկոսային դրույթով: Վարկի մարման առավելագույն ժամկետը կազմում է 48 ամիս: Ելնելով սպառողի ցանկությունից՝ վարկի մարումը հնարավոր է ցանկացած ժամանակ:

Օնլայն սպառողական վարկի ստացման, ինչպես նաեւ այլ նորամուծությունների մասին մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ WWW.TBCcredit.ge կայքով:

## TBC-Ի ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԵՎ ՄՈԲԻԼԲԱՆԿՈՒՄ ՎԱՐԿԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՎԵԼ Է




Սպառողներին տրվող սպասարկումների դյուրացման նպատակով, TBC-ի համացանցային եւ մոբիլբանկում սպառողական նոր վարկերի հանձնման կարգը դյուրացվել է:

Նորույթից օգտվելու նպատակով, սպառողները ցանկալի գումարը կարող են պահանջել թվային ալիքների միջոցով հեռավարության վրա: Դրա համար TBC-ի համացանցային եւ մոբիլբանկում հարկ է ներկայացնել լրացված հատուկ դիմում: Դիմումը լրացնելուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում TBC-ի բանկի աշխատողները կկապվեն սպառողների հետ:

Համացանցային եւ մոբիլբանկին վերոնշյալ նոր գործառույթն արդեն ավելացվել է: Դյուրացված ընթացակարգից կարող են օգտվել այն սպառողները, ովքեր լրիվությամբ չեն յուրացրել վարկային լիմիտը եւ ունեն լրացուցիչ գումար ստանալու ցանկություն:

TBC-ի թվային ալիքներով կարելի է 6-ից մինչեւ 48 ամիս ժամկետով ստանալ 500-ից մինչեւ 60 հազար լարիի վարկ:

## ՀՈՒՆԻՍԻ 15-24-Ը ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

*TBC-ի աջակցությամբ, հունիսի 15-24-ը կանցկացվի բիզնես տվյալների եւ վերլուծության առաջին խորհրդաժողովը Վրաստանում: TIDA-ն (Tbilisi International Data Analytics), 8 օրվա ընթացքում, միջազգային մասշտաբով տվյալների վերլուծության, արհեստավարժների եւ վերլուծաբանների մասնակցությամբ, շահագրգիռ գործարարների համար կանցկացնի հանդիպում:*




Խորհրդաժողովի նպատակն է հիմնել Վրաստանում ձեւավորված միջազգային տվյալների վերլուծության կոմունա, որտեղ կքննարկվեն, թե ինչպես եւ ինչու բիզնեսում պետք է օգտագործվեն վերլուծական տվյալները, իսկ մյուս կողմից՝ վերլուծություններ իրականացվեն գործարարների իրական օգտագործման համար:

TIDA-ն կանցկացվի օնլայն միջավայրում, չի սահմանափակվի ստանդարտ ժամանակացույցով: Խորհրդաժողովը առօրյա կանցկացվի երեկոյան ժամերին, եւ ամեն օր 3-ական զեկուցողներ կներկայացնեն իրենց տեսակետները կոնկրետ թեմայի շուրջ:

- Մենք գտնում ենք, որ նման կոմունայի առկայությունը նշանակալի կարագացնի Վրաստանում տվյալների վերլուծության ոլորտի զարգացումը: Հատկանշական է, որ, վերջին մի քանի տարիների ընթացքում, երկրում անցկացվել են մի շարք խորհրդաժողովներ, որոնք ներառում էին տվյալների թեման: Թեպետ խորհրդաժողով չի անցկացվել, որը կենտրոնացված լիներ գործարարությունում տվյալների վերլուծության վրա: Դա TIDA-ի գլխավոր տարբերությունն է տարածաշրջանում գործող տվյալների մյուս խորհրդաժողովներից,- հայտարարեց խորհրդաժողովի կազմակերպիչ Միշա Նադարեիշվիլին:

- Տվյալների վերլուծության եւ դրանում գործարարության ձեւավորման գործում կիրարկումը տարիներ շարունակ եղել է TBC-ի բանկի առաջնահերթային ուղղությունը: Գտնում ենք, որ գործարարների համար առանձնակի նշանակալի է երկրում այդ ոլորտի զարգացումը, իսկ TIDA-ն նշանակալի առաջընթաց քայլ է այդ ուղղությամբ,- ընդգծեց TBC-ի բանկի գլխավոր տնօրեն Վախթանգ Բուցխրիկիձեն:

Խորհրդաժողովի շրջանակներում, TIDA-ի խոսնակները քննարկելու են հետեւյալ թեմաները.

*Մայքլ Ռուկման - Առաջատարությունը թվային ժամանակահատվածում:

*Վալերի Բաբուշկին - Մեքենայական ուսուցում Python-ում, տվյալների ուսումնասիրություն X5-ում:

*Կոտե Խոփերիա - Ինչպես ընկերությունը վերածել տվյալների վրա հիմնված կազմակերպության:

*Սերիատ Կուչիջ - Մուտք՝ նեյրոնային ցանց, նեյրոնային ցանց, վերլուծության նոր ալիք:

*Կարլո Ձովինե - TBC:

*Մատիա Բոնի Սֆորցա - Causal-Nex. Նպատակ-արդյունավետության սահմանումը:

*Կեյվին Սիլիանո - Թվային տրանսֆորմացիա ROI, տվյալների վրա հիմնված թվային տրանսֆորմացիայի հետազոտությունը:

*Մարիամ Մելիքիձե - New York Times-ի միլիոնավոր ընթերցողի բնութագրումը, ըստ նրա, թե ինչ են ընթերցում նրանք:

*Նինո Մասուրաշվիլի - TBC-ի բանկի վերլուծական տրանսֆորմացիան:

*Նուցա Աբզաձե - Մուտքը R-ում:

*Ռուդրադեբ Միտրա - Ինչպես ստեղծել արհեստական ինտելեկտի արդյունավետ ապրանքներ:

*Ալեքսանդր Դյուրկա - TBC:

*Վիոլետա Միշեւա - Մեքենայական ուսուցման մոդելների պարզաբանումը:

*Անդրեաս Գալատուլաս - Վերլուծության տնօրենների խորհրդի ներկայացման մեթոդները:

*Իրակլի Մենաբդե - Վերլուծության օգտագործումը շահույթի ավելացման եւ ծախսերի նվազեցման համար:

*Neiron AI - Արհեստական ինտելեկտի օգտագործումը՝ որակի վերահսկողության եւ շեղումների կանխագծման համար:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԵՏՔ Է ՍԿՍՎԻ ՀԱԿԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ

### ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿ

*Հունիսի 4-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Ֆեյսբուք»-ի իր էջի ուղիղ եթերում հայտարարեց, որ Հայաստանում պետք է սկսվի հակահամաճարակային շարժում:*

- Հայաստանում պետք է սկսվի հակահամաճարակային շարժում: Մեզնից յուրաքանչյուրը պետք է իրենից կախված անի՝ համաճարակի տարածումը կանխելու համար: Առաջինը՝ ինքը ճշգրտորեն պետք է պահի հակահամաճարակային կանոնները, երկրորդ՝ ուրիշներից պահանջի կանոնների պահպանում, երրորդ՝ հակահամաճարակային կանոնների խախտման դեպքերը հրապարակի սոցիալական ցանցի իր էջում,- ասաց Փաշինյանը:

Վարչապետը նշեց, որ արդեն իսկ ոստիկանությունում ստեղծվել է մոնիտորինգի խումբ, որը հետեւելու է սոցիալական ցանցերում արվող ահազանգերին:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ կորոնավիրուսի տարածման պատճառով ստեղծված իրավիճակում, երկու տարբերակ է առաջարկում:

- Մենք այսօր կանգնած ենք հետեւյալ հանգրվանի առաջ՝ կա՛մ այն փաստի բերումով, որ կանոնները չեն պահպանվում, մենք գնում ենք նորից համատարած արգելափակումների, զուգորդելով դրանք պարետային ժամով, երկիրը ենթարկելով նոր տնտեսական եւ սոցիալական ցնցումների, կա՛մ մենք միասին, իրար հետ համագործակցված, հսկողության տակ ենք առնում այս իրավիճակը եւ շատ արագ արդյունքներ արձանագրում,- ընդգծեց վարչապետը:

Փաշինյանը հայտնեց, որ յուրաքանչյուրը պետք է դիրքորոշում հայտնի հետագա անելիքների վերաբերյալ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄՈՏ «COVID-19» ԹԵՍՏԸ ԴՐԱԿԱՆ Է

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ նրա ընտանիքի անդամները վարակվել են կորոնավիրուսով՝ նրանց թեստի պատասխանը դրական է եղել:*



Այս մասին վարչապետը հայտնեց ֆեյսբուքի իր էջում, ուղիղ եթերում:

- Պարզվել է, որ կորոնավիրուսի իմ թեստը դրական է, ընդ որում ուզում եմ ասել, որ որեւէ ախտանշան չեմ ունեցել: Առաջնագիծ մեկնելու պլաններ կային, որոշեցի թեստավորվել, եւ այն դրական էր, ինչից հետո թեստավորվեց նաեւ ամբողջ ընտանիքս՝ բոլորս վարակված ենք կորոնավիրուսով: Մենք չունենք որեւէ ախտանշան, վերջին մեկ ամսում, ամեն օր աշխատանքի ներկայանալիս, ինչպես կարգն է ջերմաչափվել եմ եւ չեմ ունեցել ջերմություն,- ասաց վարչապետ Փաշինյանը:

Անդրադառնալով վարակվելու հանգամանքին՝ Հայաստանի վարչապետը նշեց՝ ակնհայտ է, որ ընտանիքի անդամները վարակվել են հենց իրենից: Նա նշեց, որ կռահում է, թե ինչպես է վարակվել:

- Վարակվել եմ աշխատանքային խորհրդակցություններից մեկի ընթացքում: Մի դեպք եմ արձանագրել, որն իմ մեջ տպավորվել է: Խորհրդակցությունների ժամանակ դրվում են ջրի բաժակներ, եւ ես մի օր արձանագրեցի, որ այդ բաժակներն առանց ձեռնոցի են դրվում: Տեղում նկատողություն արեցի եւ առաջարկեցի փոխել, բայց ենթադրում եմ, որ դրանից առաջ էլ է նույն կերպ եղել, եւ այդ մատուցողի մոտ նույնպես հաստատվել է կորոնավիրուսը,- նշեց Փաշինյանը:

Հունիսի 4-ին հայտնի դարձավ, որ կորոնավիրուսով վարակված Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, վարչապետի տիկին՝ Աննա Հակոբյանի եւ նրանց ավագ դուստր՝ Մարիամ Փաշինյանի մոտ թոքաբորբ չի հայտնաբերվել:

Վարչապետը նշեց, որ հետազոտության կենթարկվեն նաեւ իր երկու կրտսեր դուստրերը՝ Շուշան եւ Արփի Փաշինյանները, որոնց մոտ եւս կորոնավիրուսի վարակ էր հայտնաբերվել:

## ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 100 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԸ

*Հայաստանի կառավարության ընդունած կորոնավիրուսի տնտեսական եւ սոցիալական հետեւանքների չեզոքացման՝ միջոցառումների շահառուներին հասանելի օժանդակության ընդհանուր չափը գերազանցել է 100 մլրդ դրամը:*

Հակաճգնաժամային 9-րդ միջոցառման շրջանակում, որը չգրանցված աշխատողների համար է նախատեսված, աջակցություն է ցուցաբերվել 186 հազար երեխայի՝ 4,9 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:

8-րդ միջոցառման շրջանակում աջակցություն է ցուցաբերվել 124 հազար մարդու: Այն մարդկանց մասին է խոսքը, որոնց աշխատանքը սահմանափակումների պատճառով դադարեցվել էր: Նրանց, ընդհանուր առմամբ, 8,4 մլրդ դրամի աջակցություն է ցուցաբերվել:

Հիշեցնենք, որ Հայաստանի կառավարությունը կորոնավիրուսի տնտեսական եւ սոցիալական հետեւանքների չեզոքացման 17 միջոցառում է հաստատել:

## ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻՆ



*Հայաստանի ազգային ժողովի փոխնախագահ, հայ-վրացական միջխորհրդարանական բարեկամական խմբի ղեկավար Լենա Նազարյանը շնորհակալություն է հայտնել Վրաստանին՝ դժվարին պահին Հայաստանին օգնելու պատրաստակամության համար:*

Լենա Նազարյանն իր ֆեյսբուքյան էջում հայերենով եւ վրացերենով գրել է.

«Վրաստանի սիրելի գործընկերներ, Որպես հայ-վրացական միջխորհրդարանական բարեկամական խմբի ղեկավար, երախտագիտություն եմ հայտնում իմ գործընկերներից ու վրաց ժողովրդից Հայաստանի համար այս դժվար պահին մեզ սատարելու եւ աջակցության ձեռք մեկնելու համար: Մեր հարազատ ժողովուրդները համատեղ են հաղթահարել հազարամյակների մարտահրավերները եւ վստահ եմ, որ անտեսանելի այս թշնամու՝ կորոնավիրուսի դեմ հաղթանակը տոնելու ենք միասին»:

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՆ ԿԱՅՔԸ ՓՈԽԱՐԻՆՎԵԼ Է ՆՈՐՈՎ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 9-ին, հրդեհի արդյունքում, Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային շտեմարանները խափանվել էին: Ներկայում դրանք վերականգնվել եւ կրկին հասանելի են բոլոր ցանկացողների համար: Հայաստանի ազգային գրադարանը նոր կայք է ստեղծել, որի ձեւավորումն իրականացրել է Torus design ընկերությունը:*

Ազգային գրադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հրաչյա Սարիբեկյանի խոսքով, կայքի ծրագրավորումը արդեն ավարտվել է, մնում է միայն թեստավորում անցկացնել եւ կոնտենտը լցնել:

Անդրադառնալով գրադարանի թվայնացված նյութին՝ նա տեղեկացրեց, որ կրկնապատճենել են գրադարանի թվայնացված բազան, որը պահելու են երկու տարբեր տեղում:

- Անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի հին սերվերների հայելային պատճենում անել: Դեռ քննարկում ենք նաեւ թվայնացված նյութերն ամպային տիրույթ տեղափոխելու հարցը,- ընդգծեց գրադարանի տնօրենը եւ հավելեց, որ իրենց աջակցում է Եվրոպական ազգային գրադարանների ասոցիացիան, որն Ազգային գրադարանի համար դրամաշնորհ է որոնում սերվերային ժամանակակից սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

### ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՊԱՐՏԱԴԻՐ

***Հայաստանում բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս՝ բոլոր հանրային տարածքներում դիմակ կրելը լինելու է պարտադիր: Այդ մասին հունիսի 3-ին պարետատան նիստից հետո, տեղի ունեցած բրիֆինգի ընթացքում, հայտարարեց փոխվարչապետ, պարետ Տիգրան Ավինյանը:***

***Բացառություն են կազմելու մինչեւ վեց տարեկան երեխաները:***

***- Որոշ դեպքեր ուղղակի թողնված են բանական մոտեցմանը: Կարծում եմ, որ այս առումով մենք խնդիր պետք է որ չունենանք: Հասկանում եմ, որ այս եղանակային պայմաններում դիմակի կրումը որոշակի անհարմարություններ է բերելու, բայց այն նվազեցնելու է վարակի տարածումը,- վստահություն հայտնեց պարետը:***

### «ՎԱՐԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

***Հայաստանի ֆինանսների նախարարությունը տեղեկացնում է, որ մարտի 17-ին գանձապետարանում բացված «Ֆիզիկական անձանց - կազմակերպությունների նվիրաբերությունից պետությանը, կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման - հաղթահարման ապահովման համար ֆինանսական աջակցություն» 900005001947 հաշվի մուտքերը, հունիսի 3-ի դրությամբ, կազմել են 1 մլրդ 096 մլն 592 հազ. 122.9 դրամ, իսկ մուտքերի ընդհանուր քանակը՝ 4380:***

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

***Հունիսի 1-ին, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորեց վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ ծննդյան տարեդարձի առիթով: Այդ օրը տեղի ունեցած հեռախոսազրույցին՝ նա քաջառողջություն եւ հաջողություն մաղթեց Նիկոլ Փաշինյանին, ինչպես նաեւ ցանկացավ շուտափույթ ապաքինում նրան եւ նրա ընտանիքի անդամներին:***

***Հեռախոսազրույցի շրջանակում Նիկոլ Փաշինյանը եւ Վլադիմիր Պուտինը մտքեր փոխանակեցին կորոնավիրուսային համաճարակի հետ կապված իրավիճակի եւ հետագա հնարավոր զարգացումների շուրջ, անդրադարձան նաեւ, Հայրենական Մեծ պատերազմում Հաղթանակի 75-ամյակի կապակցությամբ, այս տարվա հունիսի 24-ին, Մոսկվայում կայանալիք շքերթին: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել՝ այդ առիթով օրեր առաջ ստացված հրավերի համար:***

### ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ



***63 տարեկան հասակում վախճանվեց Ազգային ժողովի նախկին նախագահ, Բելառուսում Հայաստանի նախկին դեսպան Արմեն Խաչատրյանը:***

***1978թ. ավարտել է Աբովյանի անվան Երեւանի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, բանասիրության գիտությունների թեկնածու է:***

***1999-2003թթ. Խաչատրյանը զբաղեցրել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի, ՀՀ անվտանգության խորհրդի անդամի պաշտոնները, 2003-2017 թվականներին զբաղեցրել է դիվանագիտական պաշտոններ:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍ



*8.06.2020 Հռիփսիմյանց կույսերի հիշատակության օր*

*9.06.2020 Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակության օր*

*11.06.2020 Սուրբ Հովհաննես Կարապետի եւ Աթանագինե եպիսկոպոսի հիշատակության օր*

*13.06.2020 Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից*

301 թվականին Սբ. Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որն սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի: Սբ. Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից Հայ եկեղեցու մեծ տոներից է, որ հիշատակվում է Հռիփսիմյան եւ Գայանյան տոներին հաջորդող շաբաթ օրը: Տոնական այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ:

ՀՈՒՆԻՍԻ 2-Ը՝ ՔՈՒՌ ԳԵՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

# ԱՆՑԿԱՑՎԵՑ ՔՈՒՌ ԳԵՏԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

***Հունիսի 2-ին նշում են Քուռ գետի պաշտպանության օրը, որը հիմնադրվել է 1999 թվականին՝ «Քուռ-Արաքս» դաշինքի նախաձեռնությամբ եւ միաժամանակ նշվում է Վրաստանում, Հայաստանում եւ Ադրբեջանում:***



Օրվա կապակցությամբ՝ շրջակա միջավայրի գործակալության ներկայացուցիչները, մթնոլորտային օդի, հողի եւ ջրի լաբորատորիայի մասնագետների հետ միասին, մասնակցեցին Քուռ գետի ջրից նմուշների վերցման գործընթացին:

Վերցված նմուշներում տեղում որոշվել են ֆիզիկական եւ քիմիական չափանիշները, իսկ օրգանական եւ ոչ օրգանական նյութերը փորձարկվելու են լաբորատորիայում, որոնց արդյունքները հայտնի կդառնան մի քանի օրից:

Նշենք, որ շրջակա միջավայրի ազգային գործակալությունը պարբերաբար իրականացնում է Քուռ գետի մոնիտորինգը 19 կետում, իսկ եռամսյակում 33 կետում: Արդյունքները հրապարակվում են գործակալության կայքում:

ՎԱՐԿԱՆԻՇ

# ԹԲԻԼԻՍԻՆ ԵՎ ԲԱԹՈՒՄԻՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԹՎՈՒՄ

## ՎՐԱՍՏԱՆԸ՝ «ՖՈՐԲՍ»-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏԱՍՆՅԱԿՈՒՄ

Վրաստանը՝ «Ֆորբս»-ի լավագույն յոթնյակում: Ազդեցիկ հրատարակությունը հրապարակել է հետկորոնավիրուսային աշխարհում զբոսաշրջության ամենամեծ ներուժ ունեցող երկրների ցուցակը: «Զբոսաշրջության վեր հառնող աստղեր: Այս յոթ երկրները հնարավորություն ունեն դառնալու հետկորոնավիրուսային աշխարհում հիմնական տուրիստական ուղղությունները»: «Ֆորբս»-ի լավագույն յոթնյակում Վրաստանը Սլովենիայի, Թունիսի, Եթովպիայի, Մյանմարի, Ֆիլիպինների եւ Իրանի հետ է հայտնվել:







Իր գնահատականն է հրապարակել նաեւ European Best Destinations Եվրոպայի առաջատար անկախ կազմակերպությունը, որը հիմնվել է Եվրոպայում՝ մշակույթի եւ զբոսաշրջության աջակցության նպատակով: European Best Destinations-ի կողմից հրապարակված հոդվածում Եվրոպայի 20 երկրների շարքում ամենաանվտանգ ճանապարհորդական ուղղությունների վարկանիշում Թբիլիսին առաջին տեղն է զբաղեցնում: «Կովիդ 19»-ի առումով՝ Թբիլիսին ճանաչվեց Եվրոպայում ամենաապահով ճանապարհորդական ուղղությունը: Յոթերորդ հորիզոնականը զբաղեցրեց Բաթումի քաղաքը:

Ապահով տուրիստական 20-յակը հետեւյալ տեսքն ունի՝ Կորֆու, Զագրեբ, Վարշավա, Վիեննա, Վիլնյուս, Գդանսկ, Ռիգա եւ այլն:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՏՐԱՆՍՊՈՐՏ

# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄԸ ՎԵՐՍԿՍՎՈՒՄ Է

***Վրաստանում, արտակարգ իրավիճակի հայտարարման կապակցությամբ, մարտի 21-ից մինչեւ մայիսի 22-ը ավտոմեքենաների պարտադիր տեխստուգումը կանգնեցվել էր:***

Նման որոշումը պայմանավորված էր նրանով, որ, սերվիսկենտրոնների աշխատանքի դադարեցման կապակցությամբ, շատ վարորդներ չէին կարողացել անցնել համապատասխան ստուգումը: Վրաստանում, տեխստուգումը չանցնելու համար, տուգանքների դուրսգրումը, ծրագրված էր մայիսի 23-ից հետո, իսկ մյուսների համար նախ ծրագրված են այլ արտոնություններ:

Ինչպես նշեց ցամաքային տրանսպորտի գործակալության ղեկավար Միխեիլ Խմալաձեն, բոլոր նրանք, ովքեր անցնելու են տեխստուգումը, պարտավոր են պահպանել ընթացակարգը, հակառակ դեպքում կտուգանվեն 50 լարիով:

- Իսկ այն տրանսպորտային միջոցները, որոնք պարբերական տեխստուգումն անցնելու էին արտակարգ դրության ժամանակահատվածում, կարող են այն անցնել օրացուցային 60 օրվա ընթացքում, այսինքն՝ մինչեւ հուլիսի 21-ը,- նշեց Միխեիլ Խմալաձեն:

Հիշեցնենք, որ 2018 թվականի հուլիսի 1-ից տեխստուգումը դարձավ պարտադիր՝ իրավաբանական անձանց վրա գրանցված, ինչպես նաեւ՝ պետության սեփականության ներքո գտնվող ավտոմեքենաների համար: Իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ից տեխստուգումը պարտադիր դարձավ նաեւ շարժիչի 3,0 եւ ավելի ծավալով բոլոր ավտոմեքենաների համար: 2019 թվականի հունվարի 1-ից տեխստուգումը պարտադիր դարձավ բոլոր մարդատար ավտոմեքենաների համար: Սպասարկման արժեքը մարդատար մեքենաների համար կազմում է 60, իսկ բեռնատար մեքենաների համար՝ 100 լարի:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հայ անվանի ռեժիսոր ... Փելեշյան: 5.Պատմաբան Գարեգին Սարինյանի կեղծանունը: 10.Այդպիսին էր Հոմերոսը: 11.Ցինգա հիվանդությունը հայեցի: 14.Համաշխարհային մրցանակ, որը տրվում է իրենց անձը նվիրաբերած բարեգութ մարդկանց: 15....գիտակցություն, ...կա, ...մնա: 16.Արամ Խաչատրյանի հանրահռչակ բալետը: 18.Գրողի արժակ ստեղծագործություն: 19.Հայերենի վերջածանց: 20.Ցանկություն, երազանք: 22.Հայ «Սուպեր ...»: 14.Միանիշ թիվ: 26....կան, ...որդ: 29.Լեռնագագաթ Պատմական Հայաստանում: 32.Գյուղացու հագուստ: 34.Դեմքի մաս: 36.Անմարդաբնակ, բուսազուրկ տարածք: 37.Գետ Հայաստանում: 38....կել, ...սար: 39.Լենինի հայ զինակիցն ու ընկերը (կեղծանունը): 41.Օժանդակ բայ: 43.Նար-Դոսի նովելաշարի հերոսուհի: 44.Եմենի քաղաքամայրը: 45.Բայի վերջավորություն: 46.Տատիկի սիրելի գործիքը: 48.19-րդ դարում ... («Աստվածաշունչը») թարգմանվեց 400 լեզվով: 49.Ցուցական դերանուն: 50.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնի ճարտարապետը: 53.Մաշտոցյան այբուբենի չորրորդ զինվորը: 54.Կոպիտ, վայրենի: 56.Գետ Վրաստանում: 58.Հերոսուհի «Հարսնացու հյուսիսից» ֆիլմում: 61.... ու պատրաստ: 62.Քուն, նինջ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Արեւմտահայ գրող, հասարակական գործիչ Սրբուհի ...: 3.Անվանի նկարիչ Ախալցիխեից ... Սուրենյանց: 4.Թբիլիսահայ հայտնի նկարիչ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանցի դուստրերից: 6.Վանքային համալիր Հայաստանում: 7.Քաղաք Իրանում, որտեղ վանքում՝ որպես հոգեւորական, ծառայել է Սայաթ-Նովան: 8.Եղեռնի զոհ քաղաք: 9.«... ես ինչպես վեր կենամ, գնամ» (Համո Սահյան): 12.Բարի, լավ լուր: 13.Հայերն իրենց կարմիր ներկն ստանում էին այդ բույսի արմատներից: 17.Քաղաք Հայաստանում: 21.Թերակղզի Սեւ ծովում: 23.Ժամանակի միավոր: 28.Րաֆֆու պատմավեպերից «Դավիթ ...»: 29.Վ.Ի.Լենինի քաղաքը: 30.Լիճ Վրաստանում: 31.Վրաց հայտնի նկարիչ ... Փիրոսմանի: 33.Հայ մեծ պատմաբան: 34.Ողբացող քաղաք Արեւմտյան Հայաստանում: 35.Արեւմտահայ գրող Դանիել Վարուժանի ծննդավայր նահանգը: 40.Վրաստանում արտադրվող հյութ: 42.Թաշկի..., Վաղի..., ժամա...: 47.Ուսանողի դասարանը: 51.Տեղացի, ոչ եկվոր: 52.Ծովային թեթեւ քամի: 54.Վարդի ..., ծաղկի ...: 55.Հայաստանի մայրաքաղաքներից: 57.... եւ ահյակ: 59.Լիքը, առատ: 60.Վախ, սարսափ:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Աղվերան: 9.Մոմել: 10.Խոջա: 11.Ինսբրուք: 13.Հօգուտ: 16.Գիր: 17.Մաս: 19.Փախում: 22.Պրադո: 24.Սիկոկու: 25.Արժե: 27.Թռցնել: 29.Գիգանտ: 32.Ատակամա: 33.Ալմաստ: 35.Նարտ: 37.Սաղ: 39.Վանգա: 40.Գլեբ: 43.Կիմ: 44.Փաշա: 47.Ադա: 49.Զախար: 50.Զտիչ: 53.Նիկո: 54.Ուռի: 55.Հատու: 57.Ռոմ: 58.Ստիմուլ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Եղունգ: 2.Տեմբր: 3.Բախում: 4.Ցմահ: 5.Սմոգ: 6.Ճլոտ: 8.Նոքար: 12.Սիկա: 14.Օմսկ: 15.Ուրուկ: 18.Մորե: 19.Փիսիկ: 20.Խորամանկ: 21.Մունտ: 23.Դանդաղ: 26.Ժլատ: 28.Ռեւս: 29.Գաջ: 30.Գանա: 31.Նարգիզ: 34.Մարշակ: 36.Տամ: 38.Ռեդ: 41.Լարում: 42.Բազիս: 45.Ազիզ: 46.Ախոռ: 48.Գիհի: 51.Չամ: 52.Փուլ: 56.Տու:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445